ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը «Մարտական հաշվարկ» գրքի շնորհանդեսին

Հարգելի հյուրեր, գործընկերներ, սիրելի ուսանողներ

Այսօր մեզ համար, հիրավի, հիշարժան և կարևոր օր է: Մենք հավաքվել ենք ոչ թե տոնելու սոսկ գրքի շնորհանդես, այլ ևս մեկ անգամ հայացք ձգելու մեր ոչ հեռու անցյալի հերոսական էջերին, հարգանքի տուրք մատուցելու քաջարի հայորդիներին:

Արցախյան ազատագրական պայքարը ազգային ինքնագիտակցության զարթոնքի մի նոր էջ գրեց մեր պատմության մեջ: Այդ օրերին հայրենիքի հանդեպ սերը, անձնազոհության պատրաստակամությունը մի նոր ուժգնությամբ էր բաբախում մեր սրտերում, մենք միակամ էինք ու պատրաստ անձնվիրության. հասունացել ու բռունցքվել էր պայքարի ոգին:

21-րդ դարի նախաշեմին կերտվեց հայոց նորօրյա հաղթանակը, կերտվեց մաքառումների ու արյան գնով ու ծնեց հերոսներ: Հերոսներ, որոնք մեր ժամանակակիցներն են, մեր եղբայրները, հայրերը, ընկերները և հերոսներ, որոնք ավարտեցին իրենց կենսագրությունը և դարձան անմահության ճամփորդներ: Նրանք հեռացան՝ թողնելով հայրենիքը իրապես սիրելու, նրա նվիրյալ զինվորն ու ծառան լինելու պատգամ:

Այդ օրերին հայրենյաց զինվորներ դարձան ամեաազնիվ, ամենավեհ ու ամենախիզախ հայորդիները՝ ահել, թե ջահել, ուսանող, թե ծառայող, բանվոր, թե պաշտոնյա: Նրանք բոլորը հավասար էին այն մեծ գաղափարի առջև, որը կոչվում է հայրենիքի փրկություն:

Քսան և ավելի տարի է անցել այդ օրերից, պատերազմի վերքերը դանդաղ են սպիանում: Կյանքը հայրենիքին նվիրաբերած զինվորների անունները ոչ միայն չեն խամրում, այլև որպես լուսե հիշատակ ուղեկցում են մեզ ու հաստատում, որ նախնյաց քաջորդիների ոգին ապրում է մեր զավակների մեջ և, Աստված մի արասցե, եթե անհրաժեշտություն լինի, ապա առաջ կգան նորօրյա հերոսներ:

Արցախյան ազատամարտի անվեհեր ազատամարտիկներին անուն առ անուն հիշելը, նրանց սխրանքները հիշատակելը մեր բոլորիս

պարտքն է, քանզի նրանց պայքարով թեժ մարտերում թրծվեց հաղթանակը ու կայացավ Հայոց ազգային բանակը։

Այդ պայքարում իրենց ավանդը բերած շատ կամավորականների անուններ կապված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ։ Նրանց շարքերում մեր բուհի դասախոսներ էին, շրջանավարտներ, ուսանողներ։ Վերջիններիս մասին, որոնք տակավին ուսանող դարձած կամ երկրորդ, երրորդ, չորրորդ կուրսում մեկնել են ռազմաճակատ, բավական ծավալուն վավերագրում կա համալսարանական պարբերականներում։ Այդ նյութերը մեր ազատամարտիկ ուսանողների մարտական կենսագրության արձանագրումն են, հարազատներին ուղղված նամակների հրապարակումներ, ծնողների, ուսուցիչների, դասախոսների, դասընկերների ու մարտական ընկերների հիշողություններ։ «Հայոց ուխտի զինվորները» վերտառությամբ նրանց լուսանկարները տեղադրված են համալսարանի թանգարանում, բուհում գործում են լսարաններ՝ անվանակոչված ի հիշատակ նրանց, հաղթանակի, անկախության ու բանակաշինության ամեն տոնի համալսարանի ղեկավարությունն ու ուսանողությունը կրկին ու կրկին ոգեկոչում են նրանց հիշատակն ու գործը։

Այսօր կրթվում, դաստիարակվում ու հասակ է առնում տղաների մի նոր սերունդ, որը հրաշալի ճանաչում է այսօրվա մեր անկախ ու հպարտ երկրի համար իրենց կյանքը նվիրաբերած քաջերին։ Ոչ միայն ճանաչում է, այլ նախանձախնդիր է, որ նրանք իրենց կայուն ու հավերժական տեղն ունենան նախնյաց ու ապագայի հերոսների շարքում, և այս գիրքը դրա վկայությունն է։

Ամեն անգամ, երբ շնորհակալական նամակներ եմ ստանում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերի հրամանատարներից, որոնք զինվորական ծառայություն անցնող մեր ուսանողների մասին դրվատանքի խոսքեր են մեզ հասցեագրում, հպարտությամբ եմ համակվում և հուսավառվում, որ հերոսների ոգին ապրում է, ու պայծառ է Հայաստան երկրի ապագան։

Դրվատանքի է արժանի ուսանողական խորհրդի այս նախաձեռնությունը։ «Մարտական հաշվարկ» գիրքը մեկտեղել է մեր բուհի այդ ուսանողների հերոսական պատմությունները՝ այդպիսով դառնալով արժեքավոր հրատարակություն։ Շնորհավորում եմ բոլորիս և հատկապես գրքի հեղինակ Հայկ Բեջանյանին։

Հատուկ ցանկանում եմ իմ երախտագիտության խոսքն ուղղել մեր համալսարանի ազատամարտիկների հարազատներին, ընտանիքներին, բարեկամներին։ Հայրենիքն ուժեղ է իր արժանավոր զավակներով և փառք Ձեզ՝ նման զավակներ դաստիարակելու համար։ Մաղթում եմ Ձեզ տոկունություն, առողջություն. ընդունեք մեր խորը հարգանքն ու խոնարհումը Ձեր առաջ, Ձեր որդիների բարձր հիշատակի առաջ։

Հարգանքով՝
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր
Կորյուն Աթոյան